9.4 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Գնորդը պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է հինգ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1,2, 3 և 4 հավելվածները` բաղկացած 4 թերթից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ

«Երևանի ԱԵՍՀԿ» ՊՈԱԿ

«ՀէԲ Արաբկիր մ/ճ » ՓԲԸ

Հ/Հ 163058150000

ՀՎՀՀ 01237848

------------------------------ Ս. Ղալթախչյան

ՄԱՏԱԿԱՐԱՐ